



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐԿԻ» ԱՊՏԱԿՆԵՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Ա. Մինասյան Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«10» 11 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 99

Ձեռնարկողը՝

<<ԱՐԿԻ>> ՍՊԸ

գ. Պարտիզակ, Իսահակյան փող. 53

Գործունեությունը՝

**Կաքավածորի փուֆի հանքավայրի Պարտիզակ
տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման
շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվեկալություն**

<< Արագածոտնի մարզ

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրեն՝**



Վ. Սահակյան Վ. Սահակյան

Աղյիք եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 99

< 10 > 11 2017թ.

Կաքավաձորի տուֆի հանքավայրի Պարտիզակ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝

Տեղադրման վայրը՝
համայնք,

<<ԱՐԿԻ>> ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
/Ա կատեգորիա/
«Արագածոտնի մարզ, Պարտիզակ

Արամյան Տեհ
Օրթանյան

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Արագածոտնի մարզի Պարտիզակ համայնքում, Կաքավաձորի տուֆերի հանքավայրի Պարտիզակ տեղամասում: Տեղամասը տեղակայված է Արագածոտնի մարզի Պարտիզակ գյուղից 2.8 կմ հարավ-արևմուտք՝ 40°14'47"N և 44°00'17"E աշխարհագրական կոորդինատների միջակայքում: Գեոմորֆոլոգիական տեսակետից շրջանն իրենից ներկայացնում է նախալեռնային ձորակներով կտրտված, լայնատարած լանդշաֆտային գոտի, որտեղ երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հայկական լեռնաշղթայի հրաբխածին նստվածքներ: Հետախուզված հանքավայրի տարածքը բոլոր կողմերից սահմանափակվում է հանքավայրերի հետախուզված և շահագործված սահմաններով:

Կաքավաձորի հանքավայրի Պարտիզակ տեղամասի տուֆերի հաշվեկշռային պաշարները՝ A+B+C, կարգով, 12971,4 հազ.մ³ քանակով հաստատվել են «Ընդերքի պետական վարչության ՊՊՀ-ի կողմից՝ 29.12.1992թ. թիվ 355 արձանագրությամբ: Տուֆերի պաշարները հաստատվել են որպես հումք՝ ուղիղ կտրվածքի պատ քարի արդյունահանման և խճի ու ավազի արտադրության համար: Ուղիղ կտրված պատ քարի ելքը որոշված է 41.4%, կոպտատաշ պատքարի ելքը՝ 42.5%, երեսապատման իրերի բլոկների ելքը հաստատված է 17%:

Նախագծված բացահանքի տարեկան արտադրողականությունն ընդունված է 15500մ³ տուֆի զանգված: Բացահանքի դաշտի օտարման տարածքը կազմում է 15.5 հա, նրա վերջնական եզրագծի մեջ ներառված տուֆերի հաշվեկշռային պաշարները կազմում են 849335.0մ³, արդյունահանվող պաշարները՝ 771995.0մ³:

Մակաբացման ապարները ներկայացված են ժամանակակից նստվածքներով, որոնց հզորությունը չի գերազանցում 1,5մ-ը: Ժամանակակից նստվածքները ներկայացված են



հողաբուսական շերտով, ջրաբերուկ-հեղեղաբերուկ առաջացումներով, կավավազներով և ավազակավերով: Անմիջապես բացահանքի տարածքում հանվող բերրի հողի ծավալը գնահատվել է 1700 մ³, որը մակաբացման աշխատանքների ընթացքում պահեստավորվում է հանքավայրի տարածքի եզրամասում՝ հետագայում շրջակա տարածքների բարելավման համար, կամ խախտված տարածքների վերականգնման նպատակով օգտագործվելու համար: Տրամադրվող տարածքում բացակայում են մակերևութային, կամ ստորգետնյա ջրային հոսքերը և ծառաթփուտային բուսականությունը:

Կաքավաճորի հանքավայրի Պարտիզակ տեղամասի լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են բաց լեռնային աշխատանքներով շահագործելու համար: Բացահանքը նախագծվել է կիսամեխանիզացված եղանակով՝ ուղիղ կտրված քարերի արդյունահանման համար: Տուֆի արդյունահանումը նախատեսվում է կատարել ցածրաստիճան, միակողմանի ընդերկայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով՝ մակաբացման ապարներն արտաքին լցակույտ տեղափոխելով: Բացահանքի վերջնական եզրագիծը բնութագրող պարամետրերն են՝

- Ամենամեծ երկարություն – 508մ;
- Ամենամեծ լայնություն – 440մ;
- Ամենամեծ խորություն – 8.6մ;
- Ամենաբարձր և ամենացածր նիշերի միջև եղած տարբերություն – 24.1մ;
- Մակաբացման ապարների քանակ – 65145մ³,
- Մակաբացման միջին գործակից – 0.084մ³/մ³
- Բացահանքի օտարման տարած – 15,5 հա:

Քանի որ բացահանքային դաշտը նախկինում շահագործվել է, լեռնակապիտալ աշխատանքներ չեն նախատեսվում, նախատեսվում են լեռնա-նախապատրաստական աշխատանքներ, որոնք վերագրվում են բացահանքի շահագործման առաջին տարվանը և ներառում են՝ միջհանքային մոտեցող ավտոճանապարհի կարգաբերում /L= 800մ, b=8մ/ մակաբացման ապարների հեռացում և տուֆազանգվածի մշակում՝ ուղեկցող հանույթով: Մշակման համակարգի տարրերը համաձայն արդյունահանման աշխատանքների տեխնոլոգիական սխեմայի հետևյալն են՝

- Աստիճանի բարձրություն՝ 0,42մ, ելնելով քարհատ մեքենայի տեխնիկական բնութագրից
- Աշխատանքային հրապարակի անհրաժեշտ լայնություն՝ 14,19 մ
- Քարհատ մեքենայի աշխատանքային ճակատի երկարություն՝ 115մ:
- Քարհատ մեքենաների անհրաժեշտ քանակ՝ 3 հատ:

Օգտակար հանածոյի՝ քարի արդյունահանման աշխատանքներն իրականացվելու են CMP-026-1 մակնիշի քարհատ մեքենայով: Արդյունահանված ուղիղ կտրված քարերի տեղափոխումը նախատեսվում է սպառողների տրանսպորտային միջոցներով:

Բացահանքի շահագործման ժամանակ լցակույտ առաջացնող ապարները, որոնք 512902մ³ ընդհանուր ծավալով ներկայացված են՝ 65145մ³ մակաբացման ապարներով (ժամանակակից նստվածքներ) և 447757մ³ արտադրական թափոններով, լեռնային աշխատանքների նախապատրաստական փուլում տեղափոխվում են բացահանքի հարևանությամբ՝ հյուսիս արևելյան մասում տեղադրված արտաքին լցակույտեր, կույտավորվում, հետագայում, տեղափոխվում են մշակված տարածություն (ներքին լցակույտեր) բացահանքի հատակի լեռնատեխնիկական վերականգնման համար

օգտագործելու նպատակով: Բացահանքի շահագործման ժամանակ՝ մինչև 1085.1մ նիշ ունեցող հանքաստիճանի մարումը (6.6տարի) ապարների 79010մ³ քանակը պահեստավորվում է բացահանքի հյուսիս-արևելյան կողին զուգահեռ տեղադրված արտաքին լցակույտերում, որի զբաղեցրած տարածքը կազմում է 4.7հա, միջին բարձրությունը՝ 2մ: Լցակույտերում նախ փովում են թափոնները, ապա դրանց վրա հարթեցվում են ժամանակակից նստվածքները: 1085.1մ նիշ ունեցող հանքաստիճանը շահագործելուց հետո լցակույտային ապարները պահեստավորվում են մշակված տարածությունում (ներքին լցակույտերում): Ներքին լցակույտերի զբաղեցրած տարածքը կազմում է 15.5հա:

Հանքավայրի շահագործման ժամանակ անհրաժեշտ ջուրը նախատեսվում է բերվել ջրատար մեքենաներով: Ջուրը նախատեսված է աշխատանքային հարթակների, լցակույտերի, ավտոճանապարհների ջրցանի, ինչպես նաև շահագործող անձնակազմի կենցաղային կարիքների ջրօգտագործման նպատակների համար: Ընդհանուր ջրապահանջը հաշվետվությունում հաշվարկվել է 326.33մ³/տարի, այդ թվում՝ ջրցանման համար 210.37.7մ³/տարի կամ 3.9մ³/օր, իսկ կենցաղային կարիքների համար՝ 115.96մ³/տարի, կամ 0.446մ³/օր: Կենցաղային կեղտաջրերը՝ 0.401մ³ օրեկան ծավալով հեռացվելու են կեղտաջրերի հավաքման հոր, որտեղից սահմանված կարգով պետք է տեղափոխվեն քաղաքային կոյուղու ցանց: Բացահանքի աշխատանքների կազմակերպման համար կառուցվելու է արտադրական հրապարակ՝ իր անհրաժեշտ կառույցներով, իսկ աշխատողների կենցաղային կարիքների ապահովման համար նախատեսված է վազոն-տնակներ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում գնահատվել է հանքավայրի շահագործման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնք պայմանավորված են՝ լեռնակապիտալ աշխատանքների ժամանակ և հանքավայրի շահագործման ընթացքում օդային ավազանի աղտոտմամբ, հողային ռեսուրսների աղտոտմամբ՝ արտահոսքերով, արտադրական թափոններով, լցակույտերով և կենցաղային աղբով, ինչպես նաև շահագործողական աշխատանքների ընթացքում մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստությամբ: Ներկայացվել են նշված ազդեցությունների կանխարգելմանը, կամ նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումները կապված են բացահանքում ապարների հանման, բեռնման, տեղափոխման, մեքենաների և սարքավորումների շարժիչների տարբեր տեսակի վառելիքի այրման արգասիքների հետ: Ըստ աշխատանքների տեսակների՝ վնասակար արտանետումների քանակները տ/տարի և գ/վրկ ցուցանիշներով ընդհանուր կազմում են. անօրգանական փոշի՝ 7.477 (0.999), ածխածնի օքսիդ՝ 2.44 (0.326), ածխաջրածիններ՝ 0.577 (0.076), ազոտի օքսիդներ՝ 2.85 (0.38) ՊՄ՝ 0.21 (0.038), SO₂՝ 0.27 (0.036): Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների համաձայն սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված թույլատրելի նորմերի սահմաններում:

Հաշվետվությունում գնահատվել և հաշվարկվել է հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում՝ վնասակար նյութերի արտանետման արդյունքում մթնոլորտային օդի աղտոտվածության հետևանքով տնտեսությանը հասցվող վնասը և հողային ռեսուրսներին հասցվող տնտեսական վնասը:

Բացահանքի շահագործման ընթացքում ջրային ռեսուրսներին վնաս չի հասցվում, քանի որ շահագործման ընթացքում վտանգավոր արտահոսքեր չեն առաջանում:

Բացահանքի մշակված տարածքում հավաքվող անձրևաջրերը տուֆի մեծ ֆիլտրացիոն հատկության շնորհիվ կարող են ինքնահոս հեռանալ, կամ ներծծվել հատակի ապարներ, որի պատճառով դրենաժային առուներ նախատեսված չեն:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումն իրականացվելու է շահագործման աշխատանքների ավարտից և պաշարների մարումից հետո: Այդ աշխատանքները ներառում են՝ մակաբացման ապարների արտաքին լցակույտից տեղափոխվում մշակված տարածություն՝ փռում և հարթեցում մակերեսին, այնուհետև այլ նպատակներով օգտագործելու համար հողային շերտով ծածկում և տարածքին բնորոշ բազմամյա խոտաբույսերով ցանքս: Ռեկուլտիվացիայի ենթակա մշակված տարածքը ընդհանուր կկազմի 15.5 հա, իսկ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշիվը գնահատվել է՝ 1891.8 հազ.դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում և շահագործողական աշխատանքների ավարտից հետո շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կանխելու, կամ նվազեցնելու նպատակով նախագծում նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, այդ թվում՝

- փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ բացահանքի սահմաններից դուրս ավտոճանապարհների ջրցանում,
- դիզելային վառելիքով աշխատող լեռնատրանսպորտային մեքենաների և սարքավորումների վրա խլացուցիչների և ֆիլտրերի տեղադրում՝ առաջացող աղմուկի և ծխազագերի նվազեցման նպատակով
- նավթանյութերի արտահոսքը շրջակա միջավայր կանխելու նպատակով՝ վառելիքաքսուկային նյութերի պահեստավորում բետոնապատ հարթակի վրա:

Մեքենաներում օգտագործված, փոփոխված յուղերը և քսայուղերը հավաքվելու են առանձին տարաների մեջ և ուղարկվում վերամշակման: Կենցաղային աղբը և շահագործման ընթացքում առաջացող թափոնները պետք է սահմանված կարգով հեռացվեն՝ համապատասխան մարմինների հետ համաձայնեցված:

Հաշվետվությունում ներկայացվել են միջոցառումներ, որոնք ուղղված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների և հնարավոր վթարային իրավիճակների դեպքում ազդեցությունների կանխարգելմանը, կամ նվազեցմանը:

Նախագծային փաթեթում ներկայացվել է բնապահպանական մշտադիտարկումների պլան, որում ներառված են՝ շրջակա միջավայրի բաղադրիչների նկատմամբ զննման, կամ նմուշառման դիտակետերը, հաճախականությունը և իրականացման համար նախատեսվող ծախսերը, որն ընդհանուր գնահատվել է 236.0 հազ.դրամ:

Նախնական գնահատման հայտի և հաշվետվության փորձաքննության փուլերում հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Պարտիզակ համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցները դրական են գնահատել նախատեսվող գործունեության իրականացումը՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և լրացուցիչ աշխատանքային ռեսուրսների ստեղծման տեսանկյունից: Քննարկումների ընթացքում համայնքի ղեկավարի կողմից առաջ քաշվեց հարց՝ կապված հողատարածքների պատկանելիության և նպատակային նշանակության վերաբերյալ:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան: Հանքավայրի շահագործման ընթացքում էկոլոգիայի վնասակար, թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և արտահոսքեր չեն առաջանա: Առաջարկվող տեխնոլոգիական լուծումների և հաշվետվությունում ներկայացված բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմացման միջոցառումների



ապահովման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, ինչպես նաև հողային ռեսուրսների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է «օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել համապատասխան թույլտվություններ և համաձայնություններ՝ ներառյալ հողերի կատեգորիայի փոփոխության վերաբերյալ «կառավարության որոշումը և «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության» կարծիքը:

2. Հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների նկատմամբ մշտադիտարկումներ, կազմել հետնախագծային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվություն, ինչը պետք է պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

3. Ջրօգտագործումը, շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների տեղադրումը և հեռացումն անհրաժեշտ է իրականացնել «օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԿԻ» ՍՊԸ կողմից ներկայացված Կաքավաձորի տուֆի հանքավայրի Պարտիզակ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ  Հ. Մկրտչյան

